Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Անահիտ Ավանեսյան, Առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2025 թվականի հուլիսի 2-5-ը, Իսպանիայի Թագավորություն, Մադրիդ

3. **Հրավիրող կողմը**

Հայկական բժշկական միջազգային կոմիտե (AMIC)

4. **Գործուղման նպատակը**

Մասնակցություն Մադրիդում անցկացվող 14-րդ Հայկական համաշխարհային բժշկական կոնգրեսին (AMWC 2025), որի նպատակն է՝

- քննարկել գլոբալ և ազգային առողջապահական մարտահրավերները,
- ներկայացնել վերջին գիտական ձեռքբերումները,
- խթանել սփյուռք-Հայաստան առողջապահական համագործակցությունը,
- ամրապնդել մասնագիտական և միջպետական կապերը:

5. **Քննարկված թեմաները**

Համաժողովի ընթացքում ընդգծվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- Առողջապահական համակարգերի զարգացումը և բարեփոխումները Հայաստանում,
- Գիտական նորարարությունների և առողջապահական տեխնոլոգիաների կիրառումը,
- Սփյուռքի ներուժի լիարժեք օգտագործումը ոլորտի զարգացման գործում,
- Ներդրումների ներգրավման մեխանիզմներն ու հնարավորությունները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

- Նախարար Անահիտ Ավանեսյանը մասնակցել է մի շարք պանելային համնդիպում-քննարկումների, որի ընթացքում հանդես է եկել ելույթներով՝ ներկայացնելով Հայաստանի առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումները և միջազգային համագործակցության դերն այդ գործընթացներում:
- Կայացել է պաշտոնական հանդիպում Իսպանիայի առողջապահության նախարար Մոնիկա Գարսիա Գոմեսի հետ: Հանդիպման ընթացքում ստորագրվել է համագործակցության հուշագիր:
- Նախարարը այցելել է Մադրիդի բժշկական համալսարան, ծանոթացել ուսումնահետազոտական հնարավորություններին:
- Իրականացվել է շրջայց Իսպանիայի խոշորագույն հիվանդանոցային ցանցերից մեկում՝ «Քիրոնսալու» (Quirónsalud) կլինիկայում, որը մասնագիտացած է ուռուցքաբանության, նվազագույն ինվազիվ վիրահատությունների և սրտանոթային բուժումների ոլորտում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

- Ստորագրվել է ՀՀ և Իսպանիայի առողջապահության նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագիր ոլորտում երկկողմ համագործակցության ամրապնդման նպատակով:
- Նախանշվել են առաջնահերթ ուղղություններ՝ մասնավորապես նորարարական տեխնոլոգիաների ներդրման և գիտակրթական ծրագրերի համատեղ իրականացման համար:

8. **Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

- Ստեղծել աշխատանքային խումբ՝ ստորագրված հուշագրի դրույթների կատարման համար,
- Համակարգել փորձի փոխանակման ծրագրեր «Քիրոնսալու» կլինիկաների ցանցի հետ,
- Նախաձեռնել համատեղ վերապատրաստման, հետազոտական և կրթական նախագծեր Մադրիդի բժշկական համալսարանի և Հայաստանի բժշկական հաստատությունների միջև,
- Ներգրավել մասնագետներ սփյուռքից՝ ՀՀ առողջապահական ռազմավարությունների իրականացման գործընթացում:

9. **Գործուղման ֆինանսավորում**

Գործուղման ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

Ստորագրությունը, ամսաթիվը

2025 թ. հուլիսի 8

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 573-Ա 30.06.2025թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)	Նախարար **Անահիտ Ավանեսյան**
4. Գործուղման վայրը	Իսպանիայի Թագավորություն ք.Մադրիդ
5. Գործուղման ժամկետները	2025թ.հուլիսի 2-5 -ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)	Գիշերավարձ, ճանապարհածախս և Օրապահիկ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	0.0	0.0
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը	0	
	Ընդամենը (դրամ)	0.00	0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	0.0	0.0
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0.0	0.0

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը _____ (ստորագրություն) 01.07.2025թ.